

Տնօրէնութիւն այսպիսի եւ խստութիւն աչալուրջ ի նորոյ յաւել և զդղոհութիւնս ոմանց անձանց ոչ բարեմտաց :

Արգել զյանախութիւն անձահ եւ անսկտ տեղեկադրութեանց (քազրիր) եւ խնդրագրութեանց առ պետութիւն, եւ ուշ եղ կանոնաւոր եւ ամփոփ խմբադրութեանց եւ այն աղջողուտ խնդրոց կարեւոցաց եւ եթ : Միանդամայն հետեւէր ինքնին և արդիւնաւորէր զիութաջան կատարումն ինդրոց ի Բ. Դրան, մինչ յամաց հետէ բարձիթողի առնէր Օսմ. կառավարութիւն վմեծակոյն մասն զրութեանց Պատրիարքարանի՝ տեսեալ զանպատեհ զրուտծո եւ զմիջամտութիւնս օտարութիւն : Սակայն այս տայր առիթ զդղոհութեանց ոմանց անձանց :

Հաստատեաց զսիրալիր եւ զազեցիկ յարարերութիւնս ընդ Օսմանեան նախարարաց, մանաւանդ ընդ պաշտօնէից արտաքին և ներքին դործոց, ընդ մեծ եպարքոսի (Ալի եւ Ֆոււտա փաշայից), ընդ դեսպանս օտար պետութեանց եւրոպականաց եւ ընդ այլոց կարեւորագոյն անձանց :

Եւ այսպէս բարձրացոյց զազեցութիւն եւ զպատիւ պատրիարքութեան եւ Պատրիարքարանի :

Առանց ուկն տալոյ տկարամտաց եւ նենդամտաց, յատկացոյց զյաստուկ կառս եւ զերիվարս*) ի պէտու իւր, մինչ համարէին զայս նշան փառասիրութեան՝ առանց լմբունելոյց զպէտու եւ զպատիւ պատրիարքի որ յարարերութիւնս : Մանաւանդ ինքն հոգայր զծախուց :

Այցելէր վարժարանի Աւագ Եկեղեցւոյ Փում-Գարույի:

Հարկ էր պատրիարքի տալ Ազգ. Հիւանդանոցի զպաշտօնական այցելութիւն, եւ հակառակ խնդրանաց հողաբարձութեան՝ օրածդէր Գէորդ Արքեպիսկոպ. զայցելութիւն իւր, կամեցեալ ի յեղակարծ ժամու երթալ ինքնին եւ տեսանել աչօք իւրովք զիսկական վիճակ Ս. Փրկչ. Կեդր. Հիւանդանոցի :

Գիտէր սա սոսուդութեամբ զվիճակ Հիւանդանոցի և կամէր մեր կացուցանել զիսկադաւանութիւնս որ պաշտօնական այցելութիւնս :

Միջոցաւ բժշկապետ Սերոբէի Վիչէնեան (Սերվիչէն էֆէնսի) եւ այլոց հաւատարիմ անձանց առնոյր հանապազ զճշգրիտ, միանգամայն զկսկծառիթ տեղեկութիւնս զԱզգ. կեդրոնական Հիւանդանոցէ, զանինամ վիճակէ հիւանդաց եւ անկելոց, ցաւադարաց եւ խելագարից զանկողնոց, զհանդերձից եւ զսննդոց նոցա, զորբոց եւ զդպրոցէ

*) Մանօթ. Վ. Ե. Մ.-Պօլոս Պէյ Տատեամ, վասօդապետ, նուիրէ զիսկ կառաց, իսկ իմբ զնայ առնու զկառան :

եւ թէ պակասէին յոյժ յոյժ ի դպրոցի մահճակալք եւ անկողինք համեմատութեամբ թուոց աշակերտաց, մինչեւ ի միում անկողնուզ ննջել 20-25 ամեայ երիտասարդաց ընդ 8-10-12 ամեայ մանկանց եւ պատանեաց: Հակառակ նուազ եւ անխնամ սննդեան պատսպարելոցն Հիւանդանոցի եւ որբոց, յաւուրս պահուց անդամ վայելէին պաշտօնեայք եւ վարժապետք ընդ տեսչի զհամագամ կերակուրս ուտեաց՝ ընդ ոմանս սիրելիս իւրեանց:

Ուստի յաւուր միում ի յեղակարծ ժամու մեկնեցաւ Տ. Գէորգ Արքապս. Պատրիարք ի պատրիարքարանէ, եւ զգանապարհացն հրամայէր կառապանի ուղղել զկառան յայս եւ յայն կողմ: Եւ այսպէս եհաս եւ եմուտ ի Հիւանդանոց, ընդ որ յապուշ կրթեալ եւ շփոթեալ պաշտօնէից համայնից, տեսչի եւ վարժապետաց, ոչ զիտէին զի՞նչ առնել: Միանդամայն աղղեցին Հոդաբարձուաց զյեղակարծ գալուատ Ս. Պատրիարքի:

Ինքնին զնաց ուղղակի ի խոհանոց, եւ սկսաւ հետազօտել զկերակուրս, զկաթսայս, զսահս եւ զայլ: Ետես զանխնամ եւ զորդնոտեալ կերակուրս պահոց համայն պատսպարելոց Հիւանդանոցի եւ զհամագամ կերակուրս ուտեաց պաշտօնէից եւ վարժապետաց յաւուրն պահոց, զանմաքրութիւնս խոհարարի եւ խոհանոցի, եւ թէ կարգեալ էին զոմն յապուշ-խելաղարից յերկրորդ Մուրքուրիկ (եամաք) խոհարարի: Ամա չոքաւ ի ննջարան որբանոց դպրոցի ի Ս. Յակոբ եւ ստուգեաց դտիրառիթ ճշմարտութիւն տեղեկութեանցն Հաղորդելոց ինքեան:

Զննեալ եւ զննջարանս հիւանդանոցի, զհիւանդս, եկն եւ նստաւ ի սրահի ընդունելութեան՝ վշտացեալ եւ զայրացեալ:

Պահանջեաց ի տեսչէ եւ դայլ տեղեկութիւնս կարեւորս՝ դքանակութինէ պատսպարելոց, որբոց, մանկանց եւ պաշտօնէից, եւ վերաղարձաւ ի Պատրիարքարան: Եւ ի ժողովի հաղորդեաց դարդիւնս այցելութեան իւրոց եւ դտիրուր միճակ Հիւանդանոցի, առաջարկեալ փութալ բարեկարգել զհամատառութիւն զայն, միանդամայն զԱ. Յակոբ յատկացուցանել ի դպրոց եւ ի ընտկութիւն երիտասարդաց՝ որոշեալ եւ հեռացուցեալ զնոսա ի մանկանց եւ ի պատանեաց:

Եւ ահա Հոդաբարձութիւն Հիւանդանոցի զամօթի հարեալ, դրդուեալ եւ բորբոքեալ ընդ յեղակարծ այցելութեան Ս. Պատրիարքի եւ ընդ խայտառակութիւնս իւրեանց, սկսան յուղել եւ գրգռել զկուսակցութիւն իւրեանց եւ զաղղ (իմա' զկ. Պօլիս), ընդ որս միացեալ էին պարոնայք Քրիստոսուր Ղաղարոսեան եւ Ստեփան Փափաղեան ուսուցիչք դպրոցի Ազգ. Հիւանդանոցի, եւ տարածայնէին իրը զի Ս. Պատրիարք կամի կործանել զՀիւանդանոց, ցրուել զաշակերտու,

եւ թէ ասացեալ իցէ երիտասարդ աշակերտաց գաւառացւոց ի Հե-
անդանցի, ևթէ «զի՞նչ պիտոյ է ձեղ ուսումն, գնացէ՛ք եւ արարէ՛ք
զբէլլաքութիւն (ըստ ոմանց սակրիչութիւն եւ ըստ այլոց լուացա-
րար կամ լուացով լինել ի բաղանիս)»:

Ամերայք ունանք եւ բարեմիտ անձինք դիմեալ առ Պատրիարք աղաքէին զնս գաղաքեցուցանել կամ մեղմել զայս խնդիր կամ սիրա-չահել զաղգեցիկ հոգաբարձուս, վերականդնեալ զպատիւս նոցա:

Ուր ուրեմն հաճեցաւ Ս. Գէորգ Արքիպոս. խոստանալ, եւ կան-
խաւ աղդ արարեալ, զնաց ի նորոյ ի Հիւանդանոց, յորում էին նա-
խապատրաստութիւնք ըստ ամենայն մասանց։ Այլ ոչ յայս եւ յայն
կողմ շրջեցաւ, ասելով, զի ևս զիտեմ զնոր փոփոխութիւնս առթիւ-
յատուկ այցելութեան իմոյ։ Եւ նստաւ ժամս ինչ եւ պարապեցաւ
յայլ խօսակցութիւնս ի մեծ ընդունարանի, ընդ ուղեկիցմն եւ ընդ-
հոգաբարձուս։ Եւ այսպէս վերապարձաւ ի Պատրիարքարան։ ոչ ա-
խորժի եղեւ եւ այս հոգաբարձուաց։

Եղեւ պատճառ զժոհութեան եւ սրբածառթեան ոմանց մէծա-
մէծաց եւ խաղիբն գերեզմանատան Յելայի որ ի Բանկալթի թաղի:

Ոչ էր առաջին, եւ ոչ վերջին, զոր յուղին յաւուրս պատրիարքութեան Գէորգայ Քաղաքապետութիւն Բերայի ըստ Թելագրութեանց աղդեցիկ անձանց ոմանց ի հայ պապականաց ընդդէմ գերեզմանատան Հայոց Բերայի, կամեցեալ իւրացուցանել զմասն ինչ, որպէս քանից փորձեալ էին եւ փորձէին:

Յետ բաժանման Հայոց ուծացելոց եւ մոլորելոց ի պապադա-
ւանութիւն, որպէս յոմանս տեղիս, նոյնպէս ի ներա պահանջէին
զմասն ի հոչակաւոր գերեզմանատանէ յիշելոյ, առարկեալ եւ ցու-
ցեալ զատականաքարինս՝ զի նախնիք իւրեանց թաղեալ են անդ եւ ու-
նեն ոյիշատակարանն : *)

Եւ զի պատւական դիրք եւ վայր գերեզմանատանն այսորիկ ի բանկայթի առնուին զնշանակութիւն կարեւոր եւ զգնահատութիւն

Մահօք. Վ. Ե. Մ. - Խնմին հետազոտեալ եւ ֆնսեալ զգիրեզմանառունդ յամի Տեսան 1911 տեսաք, զի Պատրիարքունիք՝ յորժամ ի խնաւս Պատրիարքարանի քաղեալ էր Բ. Դուռն զուծացեալսն, բոյլատրեալ են ումանց ուծացելոց քաղել յեզ զերս գերեզմանառան իբր յանպիտ տեղին զպապահաւան Հայո իբրև գրանադըետս եւ առ ի որոշել տալով դնել ի վերայ գերեզմանաքարից գուռու Ք. երէ հահամայից եւ երէ աշխարհականաց, զոր եւ արգելեալ են խսպան յետ կազմելոյ նոցու զառամանին հոգեւոր կրօնապետութիւն պաշտպանութեամբ պապական պետութեանց: Որով եւ խսպան որոշեցան ի Հայոց եւ անջատեցան:

բարձր յընդարձակելն եւ ի բարեկարդել Բերայի, գամ քան զգամ մտեալ ի շրջանակ շինուածոց, առթիւ բաղրամաց եւ խնդրոյ պապադաւանից Հայոց նախ եւ զառաջինն կամեցաւ եւ ջան կալաւ երբեմն սպարապետ հոչակաւոր Թիվա փաշա ի զբաւել զվայրն զայն եւ շինել անդ զգօրանոց եւ զայլ շինուածու: Եւ յաջողեցաւ նմա ճարտարութեամբ իմն առնուլ եւ տիրել միոյ մասի զերեզմանատան եւ կանդնել անդ զգօրանոց աջակցութեամբ ոմանց ազգեցիկ Հայոց յաւուրս պատրիարքութեան Յակոբայ վերջնոյ:

Յետ նորս յարկաւ քաղաքապետութիւն Բերայի ըստ թելադրութեանց ազգեցիկ Հայոց պապականաց յափշտակել իսպառ զգերեզմանատունն զայն յանուն եւ ի պէտս արուարձանին և քաղաքամասին Բերայի, ջան կալեալ նաև խափանել զթաղումն ննջեցելոց: Շարունակէին եւ խնդիրք պապականաց ընդ պաշտպանութեամբ պապական զեսպանաց եւրոպականաց, իսկ Պատրիարքարան եւ Հայք Բերայի վիճէին ընդդէմ հակառակորդաց եւ ջանային ի պաշտպանութիւն ազգային սեփականութեան ըստ կալուածագրոց եւ ըստ դարաւոր տիրապետութեան:

Արժանայիշտառակ Աւագ Քահանայ Զաքարիա Ա. Երսրութեան Եկեղեցւոյ ժրաշնութեամբ իմն եւ արթնութեամբ յաջողեալ էր տաւ շրջապատել զգերեզմանատունն զայն յետ անցիցն որ յաւուրս սպառապետ Թիվա փաշա ի:

Այսպէս շարունակէր յաւուրս սպառապիարքութեան Գէորգայ Արք-Եպիսկոպոսի:

Լուեալ Գէորգայ ի հաւատարիմ ազբերաց, զի ոմանք ի դիխաւորաց Հայոց, եւ յանուանէ Պողոս պէյտամիրայ Տատեան, խոստացեալ են ի գաղտնի տալ զբաժին ինչ ի զերեզմանատանէ ի նուէր և ի գոհացումն պապականաց, եւ զի ոմանք ի խոստմանատուաց էին անդամք Գերազոյն Ժողովոյ եւ ազգային վարչութեան Պատրիարքարանի, առանց հալորդելոյ ումեք զմտաղրութիւն իւր, ինքնին եւ ի գաղտնի ձեռնարկեաց պաշտպանել զդատ ազգային ոստ դիւնագիտութեան իւրոյ:

Փութացաւ դիմել նախ եւ քանից Մեծի Եպարքոսի եւ պաշտօնէի արտաքին գործոյ Թուրքիոյ, եւ ասու մի անդոմ դեսպանի Գաղղիու պաշտպանի պապականանից:

Ի շարս պաշտպանողական բանից իւրոց ըստ դարաւոր իրաւաբանական նկատողութեանց եւ ըստ սեփականատիրութեան, առարկեաց առաջնոյ եւ դայս, եթէ դուք ինքնին խրախուսէք զհպատակս Օսմանէան պետութեան զիմել ի պաշտպանութիւն այլոց պետութեանց ի կարեւորագոյն ինդիրս՝ յորժամ յարգէք եւ կառարէք զանիրաւ պաշտպանութիւնս նոցա եւ առ այն հարկանէք զարդար իրա-

ւունս հպատակաց ձերոց, մինչ հարկ է արդիւնաւորել զհակառակն ի պաշտպանութիւն արդարութեան՝ իրաւանց եւ հպատակաց ձերոց:

Դիմէ եւ առ ի դեսպանն զաղղիական, զոր սիրաշահէ առարկեալ՝ եթէ սակաւաթիւ են պատպաղաւանք ի Հայոց, մինչ միլիոնաւոր մասն սուսարաթիւ կազմէ զհայ ազգ, եւ անջուշտ հածոյ լինի Գաղղիական կայսրութեան շահնել յաւէտ զհամակրութիւնս միլիոնաւոր Ազգի Հայոց, քան դժո - 50 հպատ պատպականաց: Միանգամայն պարզէ զարդար իրաւունս Հայոց եւ զանիրաւ պահանջ վորքաթիւ ուժացելոց:

Այսպիսեօք միջոցօք եւ ճարտարամտութեամբ հնարէ զպաշտպանութիւնս եւ տայ գաղարեցուցանել զվէճ հակառակորդաց, յորս մասնակցէր եւ պետութիւն Օսմաննեան եւ հետեւէր առաւել սեփականել ինքեան յանուն զօրանոցի կից եղելոյ եւ շարունակելոյ մինչեւ ցայսօր:

Յետ շահելոյ զայս դատ՝ հաղորդէ Ս. Գէորգ Արքեպս. Պատրիարք վարչական ժողովոյ Պատրիարքարքարանի, ընդ որ խոժոռին եւ վշտանան որք խոստմնասուք էին ի գաղտնի:

Ուստի ասս եւ անդ ամբաստանէին զպատրիարքը, առարկեալ զայս դործ, եթէ ինքնին գործէ ի գաղտնի եւ առանց հաղորդելոյ մեզ, իմա՝ ժողովոյն պատկանելոյ եւ առանց խնդրելոյ զաջակցութիւն մեր:

Յաւուր միում, յորժամ մեղադրէին դֆէորդ ըստ այսմ խնդրոյ ի Մեծ նոր Խանի, Պէօյիւք ենի Խան) ուր էին կեղրոնք հայազն դրամատեարց, վաճառականաց եւ այլոց, լսէ ոմն յունազգի - հայ-հոսում - դրամատէր - վաճառական Գատը գիւղացի (Քուղքիտոն) զտրտունջս հակառակորդաց, եւ հարցանէ զնոսս, «եթէ շահեցա՞ւ զտրտունջս հակառակորդաց, եւ հարցանէ հաստատական այո՛: Ապա պատրիարք ձեր զդատն»: Պատասխաննեն հաստատական այո՛: Ապա ուրեմն, յաւելու ասել Յոյն. «առ ի՞նչ են ամբաստանութիւնք եւ զժոհութիւնք ձեր՝ եւ աղաղակք՝ ցորչափ վաստակեալ է զդատն: Եթէ լինէր նա պատրիարք ազգի մերում (Յունաց), պաշտէաք զնա»:

Ոչ զիսէր Յոյն դրամատէր Գատը գիւղացի զիսկական միունցաց:

Զան մեծ կալաւ Գէորգ Արքեպս. ի բարեկարգել զդպրոցս Մայրաքաղաքի, եւ կազմել զիսթական ծրագիր միօրինակ, զօրացուցանել զկրթութիւն մայրենի հանդերձ այլովք, եւ եկեղեցական երաժշտութեամբն: Որոյ վասն խորհրդակցէ, եւ ընդ աղգային խմբագիրս ուժան: Որ եւ այս զրգոէր զնախանձ Սէթեան-Տէրոյինց կուսակցութեան:

Վարէր նախանձախնդրութեամբ առանձին եւ ընդ անձինս գիտնականս եւ խստիւ ընդ եկեղեցականս եւ ընդ պաշտօնեայս:

ԳԼՈՒԽ ԻԲ.

ՅԱՂԱԳՍ ԳԱԼՍՏԵԱՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿԱՑ ԵՒ
ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿ ՄԻՔԱՅԵԼԻ ԼՈՌՈՒ ՄԵԼԻՔԵԱՆՑ
ԵՒ ԿՈՍՏԱՆԴԻՆ ՄԵԾԻ ՏՔՍԻ ՆԻԿՈԼԱՅԵՎԻԶՈՒ ԵՒ
ՍԱԿՍ Տ. ՄԱՏԹԵՈՍ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԵՒ ԱՆՑԻՑ ԻՆՉ

Առ ի սիրաշահել զհայս թուրքիոյ ըստ քաղաքական-դիւանա-
դիտական նկատողութեանց եւ ակնկալութեանց, ջան կալաւ ոռուա-
կան կառավարութիւն տալ ընտրել ի կաթուղիկոս ամենայն զայոց
յետ հանգստեան Տ. Ներսիսի Ս. Հայրապետի Ազգի մերոյ զոմն յե-
պիսկոպոսաց զայոց թուրքիոյ, որոյ վասն բանակցէր ի գաղտնի
ոռուական դեսպան Կ. Պօլսոյ ընդ երեւելիս զայոց: Եւ այսպէս ընո-
րեցաւ Տ. Մատթէոս Արքեպոս. ի կաթուղիկոս եւ սպասէր մնայր
ասդ ի Կ. Պօլս գալստեան Հրաւիրակաց ի Ս. Էջմիածնէ եւ պատ-
ուիրակի ոռուական կառավարութեան, զորպիսի պաշտօն յանձնեալ
էր պետութիւնն ոռուաց զօրապետ Միքայէլի Լոռու-Մէլիքեանց առ
ի հրապուրել զհայս:

Եկեալ հասեալ էին Տ. Մակար Արքեպոս. եւ Տ. Մկրտիչ վարդա-
պետ Բաբամեանց Հրաւիրակաց ի Ս. Էջմիածնէ, եւ առեալ գհրաման
Վեհ. Հայրապետի՝ դիմեալ էին յութստ եւ յերկրպագութիւն Ս. տե-
ղեացն անօրինականաց ի Ս. Երուսաղէմ:

Եկն եւ Լոռու-Մէլիքեանց (Լորիս Մէլիդօֆ) զօրապետ ի 20ն
Ապրիլի 1859 ամի: Եւ իշեւանեցաւ ի ոռուական դեսպանատան:

Ամիրայք եւ գլխաւորք Հայոց Կ. Պօլսոյ՝ առ ի մեծարել եւ
փառաւորել զծ. Մատթէոս կաթուղիկոս եւ ի դիւրացուցանել զյա-
րաբերութիւնս որ ընդ նորին Սրբութեան, խորհրդակցեալ առթիւ
զալստեան զօրապետ Միքայէլի, տեղափոխեցին զծ. Մատթէոս կա-
թուղիկոս ի Միջագեղջէ ի Բերա, յատկացուցեալ ի բնակութիւն Նո-
րին Սրբութեան զհոյակապ ապարանս Պօլսո Ամիրայի Տատեան վա-
սողապետի որ ի Թօնրու եօլ, մերձ Եկեղեցւոյ Ս. Երրորդութեան:

Յետ աւուրց ինչ եկն Լոռու-Մէլիքեանց եւ ներկայացաւ առ
գէորգ Արքեպոս. Պատրիարք ի Պատրիարքարանի, եւ ետես զմեծա-
րանս վայելուչս:

Տեսակցեալ սակաւուք ընդ միմեանս, առեալ Ս. Պատրիարքի
տարաւ զզօրապետ Միքայէլ զպատուիրակ ոռու. կառավարութեան
եւ ներկայացոյց Վեհ. Տ. Մատթէոս կաթուղիկոսի ի Միջագեղջ
արժանաւոր իմն հանդիսիւ, նախ քան զտեղափոխելն ի Բերա:

Յետ տալոյ Ս. Պատրիարքի զփառաւոր իմն կոչունս ի պատիւ

զօրապետի յիշելոյ, սկսաւ ոգեւորութիւն մեծ եւ մըցումն ի գլխաւորս Ազգի մերոյ առ ի պատուել զԼուռու-Մէլիքեան:

Զայսու միջոցաւ եկն եւ Կոստանդին Մեծ դուքս եղբայր Օգոստ Ազեքսանդր Բ. Կայսեր ոռւսաց ի Կ. Պոլիս (ի 28 Մայիս 1850), զորոյ զգալուստ չնորհաւորեցին Տ. Մատթէոս Ս. Կաթուղիկոս եւ Ս. Գէորգ Արքեպոս -Պատրիարք ըստ արժանուոյն:

Մի զկնի միոյ յաճախեցին ասիթք ոգեւորութեանց Հայոց Կ. Պօլսոյ, եւ հանդէսք նշանաւորք, յուղիսիս եղեւ նշանաւոր՝ եղական եւ պատմական նաև հանդէս շքեղ յուղարկաւորութեան թաղման Մաքսուտ ամիրայի Սարիմեան վախճանելոյ ի 29-30 Մայիսի, ներկայութեամբ Վեհ. Հայրապետի, և ներկայ և նախկին պատրիարքաց եւ այլոց, թէպէտ անձրեւ յորդահոս վրդովէր զհանդէս յուղարկաւորութեան:

Ռուսական կառավարութիւն ջանայր ի գաղտնի փութացուցանել զչու Վեհ. Կաթուղիկոսի ի Ս. Էջմիածին՝ ազդեալ ոմանց ազդեցիկ անձանց մերազնեայց, որք հետեւէին հաճոյանալ միշտ եւ հանապազ ուստական կառավարութեան, ակնկալէին տիտղոսից եւ արտօնութեանց եւ շքանշանից, որպէս եւ ինդրեալ էին և Տ. Մատթէոս Կաթուղիկոսէ, թէպէտ սա կամէր զանդաղել ի չու, եւ յուզէր զինդիրու ինչ:

ԳԼՈՒԽ ԻԹ.

ՅԱՂԱԳՍ ԾՐԱԳՐԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԵԱՆՑ ԱՌ ՎԵՀ. ԿԱԹՈՒՂԻԿՈՍ

Որպէս տեսցի ի ստորեւ ի վերջ այսմ գլխոյ ի պատճէնէ ծրագրի, Տ. Մատթէոս Կաթուղիկոս Եթէ ըստ զաղանածածուկ նպատակաց իւրոց եւ Եթէ խրախուսեալ յանփորձ անձանց ոմանց, մանաւանդ ի Յովհաննէս վարդապետէ Սէթեան եւ ի Յովհաննէս պէյէ Տատեան վառօղապետէ, ջան կալաւ տալ ծրագրել զառաջարկութիւն ինչ իրը ի պէտու եւ ի պայծառութիւն Եկեղեցւոյ Հայաստանեայց, զոր եւ ստորագրեալ ոչ սակաւ Հայոց ի Կ. Պօլսոյ եւ ի գաւառաց, զոր եւ ստորագրեալ ոչ սակաւ Հայոց ի Կ. Պօլսոյ եւ ի գաւառաց, Կաթուղիկոսէ կարգել ասդ ի Կ. Պօլս զոմն յեպիսկոպոսաց ի Ս. Կաթուղիկոսէ կարգել ասդ ի Կ. Պօլս զոմն յեպիսկոպոսաց Մայր Աթոռոյ ի Կաթուղիկոսական ներկայացուցիչ, կազմել զժողով Եկեղեցական ի Կարին առ ի բարեփոխել զամուսնական, զվարչական եւ զայլ օրէնս ինչ, հաստատել զկարգապահական կանոնս ի պէտու Եկեղեցական պաշտօնէից եւ կարգել զնոր բարեկարգութիւնս ի պէտու Ազգի եւ Եկեղեցւոյ:

Յանձնէ Տ. Գէորգ Արքեպս. Պատրիարք խորհրդակցութեան եւ որոշման Հոգեւորական եւ Գերադոյն ժողովոց զհանրագիր ժողովը դական եւ զառաջարկութիւնդ, միանգամայն տայ զիտրհուրդս՝ ըդգուշանալ զարդիս յեկեղեցական ժողովոց եւ ի հնաւանդ օրինացն եւ յամուսնական կանոնացն փոփոխութեանց, խնդրել ի նորընտիր Ս.Կաթողիկոսէ՝ յետ օծմանն առնուլ յուշադրութիւն զծրագիրն բարեփոխեալ, յետ կարեւոր փորձառութեանց եւ խորհրդակցութեանց անդ ի Ս. Էջմիածին ընդ խոհեմ, հեռատես, հմուտ եւ եկեղեցասէր եկեղեցականացն բարձրաստիճանաց եւ փորձառուից եւ ըստ այն տնօրինել զոր ինչ արժան իցէ:

Իսկ Հոգեւոր եւ Գերագոյն ժողովք կարգեն զՄասնաժողով յատուկ, որ բարեփոխէ եւ համառօտէ զծրագիրդ առաջարկութեանց, եւ ուր ուրեմն օրաձգէ եւ թողու յանորոշ վիճակի:

Ընդ այսպիսի հետեւանս խոժոռեալ Տ. Մատթէոս կաթողիկոսի եւ կուսակցացն՝ դրգուն զդժգոհութիւն ժողովրդականս ընդ գէմ Գէորգայ, հնարեալ զստապատիր տարածայնութիւնս, միանգամայն փութայր այլեւս Տ. Մատթէոս կաթողիկոս մեկնել աստի ի Կ. Պօլոյ եւ երթալ ի Ս. Էջմիածին՝ թողեալ զորո՞մ խոռովութեանց:

Հակառակորդք յեղաշրջեալ զիմաստս առաջարկութեան եւ վարագութեալ խարդաւանօք զիսկական նպատակ եւ զջանսն, առ ի զրգուել զշայս, տարածայնեն տակաւ առ տակաւ, իբր զի Գէորգ Արքեպս. Պատրիարք եւ զօրապետ Միքայէլ Դանիէլեան Լոռու-Մէլիքեան միաբանեալ ի գաղտնի՝ պատրաստեն զծրագիր եւ զառաջարկութիւն միաբանութեան ընդ յունական - ուռուսական եկեղեցւոյ, եւ այսպէս շարժեն զգայթակղութիւնս սկսեալ ի 1858 թուականէ եւ հասուցանեն զարձագանս ստապատիր տարածայնութեանցն մինչեւ յօտարս եւ ի հեռաւորս: Զորպիսի գայթակղութիւնս արծարծէին մերթ հակառակորդք Գէորգայ մինչեւ ցամս 1870 առթիւ կաթողիկոսական ընտրութեան ի 1864-5 ամս, եւ ի պատճառս այլոց խնդրոց:

Օրինակեմք ասդէն զերկուս յօդուածս ի Մասեաց Աղաւնոյ հրատարակելոյ ի Թէոդոսիա յապացուցութիւն բանից մերոց եւ ի յանդիմանութիւն անխիղճ հակառակորդաց:

Վերնագիր առաջնոյ յօդուածոյ է այս. Լոռու Մէլիքեանց զօրավարին նամակը.

«Քաջ եւ անուանի Հայկազն զօրապետը Միքայէլ Տարիէլեան Լոռու-Մէլիքեանց (որ եւ Լորիս-Մէլիքով) գեղեցիկ եւ զօրաւոր պատասխանով մը հերքեր է Օղեսայի ոուս լրագրոյն՝ իրեն այս «տարի գէպի Պոլիս ըրած ճանապարհորդութեանը համար տուած

«լուեհկական լուրերը : Արդէն Մասիսը Պոլսոյ անգղիական լրագրի տուած յեղակարծ տեղեկութիւններուն անհիմն լինելը ցուցուցեր «էր, մեր Ծիածանն ալ իր ոռուերէն մասին մէջ Օդեսայի լրագրոյն այս կողմանէ ըրած սխալները քանի մը խօսքով ուզզեր էր, բայց «մէծ ուրախութիւն է մեղի տեսնելը որ քաջ զօրապետը ինքնին պար- «ղեր է ճշմարտութիւնը ի յանդիմանութիւն խոռվասէր կամ չարա- «միտ հակառակորդաց : Դիտմամբ կը բանեցնեմք հոս խոռվասէր բա- «ռը, վասն զի յայտնի կը տեսնեմք որ այն անգղիական լրագիրը և «Օդեսայի թղթակիցը Ազգին մէջ նոր խոռվութիւն եւ անհիմն կաս- «կածներ սերմանելու մտքով կը հրատարակեն այսպիսի լուրերը : Օ- «րինակի համար, Հայոց եւ Յունաց Պատրիարքները քրիստոնէական «քաղաքավարութեամբ իրարու հետ յանկարծ կը տեսնուին, - իսկոյն «պատրաստ են պապականն ու բողոքականը Հայուն ականջէն վար «ըսելու, ոմանք նաև իրենց լրագրացը մէջ հրատարակելու, թէ Յու- «նաց միտքը Հայերը յոյն դարձնելն է . . . : Բայց փառք Աստծոյ որ «Հայն ալ խելք ունի, եւ Զմիւռնիոյ Արշալոյսին պէս ու Պոլսոյ Մա- «սիսին պէս լրագիրները, եւս եւ մանաւանդ ջատագովներն ալ պա- «կաս չեն, որ կարող են իրենց Ազգին պատիւը արժանաւորապէս «պահպանել ու պաշտպանել : Լոռու Մէլիքեանց զօրավարին նամակը «ահա միայն անոր համար կը թարգմանեմք ու կը հրատարակեմք «հոս որ մեր ազգութեան թշնամիներն եւս, որ ոռուերէն բնագիրը «չեն հասկնար, կարդան ու խրատուին :

« Պարոն . . Զեր հրատարակած Օդեսայի լրագրոյն 46 թուահա- «մարին մէջ Պօլսոյ թղթակցէդ նամակէն առնուած լուր մը կարդա- «ցի Մելիխովլ ըսուած զօրավարի մը վրայ : Եւ որովհետեւ Կովկա- «սու երկիրը Մելիխովլ զօրավար չկայ, իսկ ի Պօլս այն ատենները «ես կայի Լորիս-Մելիխովս, անոր համար տեղեկութիւնը իմ վրաս «կառնում :

« Աչքիս չէի ուզեր հաւատալ՝ երբ կարդացի այն թուահամարին «մէջ որ իրը թէ իմ Տաճկաստան երթալուս նպատակն է եղեր եր- «կու եկեղեցեաց մէջ միաբանութիւն ընել . . . Յետոյ, առաջին լուրը «փոխելով, եւ իրբեւ անոր սխալը շակելու մտքով, ձեր լրագրոյն «52 թուահամարին մէջ տպուած է թէ ես կաշխատեմ եղեր էջմիա- «ծընի եւ Վանայ Կաթուղիկոսութիւնները միաւորել, այնպէս որ «առաջինին տրուի բոլոր Հայոց ազգին վրայ հոգեւորական իշխա- «նութիւնը, իսկ երկրորդին բոլոր աշխարհական իշխանութիւնը : - « Շատ այլանդակ մտածութիւն . մի՞թէ կարելի բան է որ օտար տէ- «րութեան հպատակ մարդ մը ուրիշ թագաւորութեան տակ եղած «պատրիարքութեան մը աշխարհական գործերուն խառնուի »:

« Իմ սիրտս ամենեւին չցաւիր այսպիսի լուրերու վրայ, վասն
« զի խելացի մարդը չհաւատար անոնց, եւ գիտէ թէ անոնք ամենեւին
« չեն յարմարիր՝ ոչ իմ վիճակիս, եւ ոչ ունեցած ջերմեռանդութեա-
« նըս այն դաւանութեան, յորում ծնած եմ, բայց այս անհիմն լուրերը
« անտարակոյս իմ հաւատակից եղբարցս սրտին մէջ զանազան կաս-
« կածներ պիտի ձգեն՝ թէ հոս Ռուսաստան եւ թէ Տաճկաստան:
« Հրամանքդ լաւ պէտք է հասկնաս, պարոն խմբագիր, թէ ես ամե-
« նեին յօժարութիւն չունիմ որ իմ անունովս և ոչ ամենափոքր բա-
« րոյական անհանդստութիւն մը պատճառէ իմ հաւատակիցներու»
« ձեր թղթակցին անխոհեմութիւնը, եւ ահա անոր համար գրիչը
« կառնեմ որ եղածը ճշմարտութեամբ պատմեմ ու անհիմն մեկնա-
« րաբանութիւնները հերքեմ»:

« Անցած տարի՝ ես իրրեւ լուսաւորչական հայ՝ յուղարկեցայ
« Կոստանդնուպոլիս ընդ առաջ եւ յուղեկցութիւն ի Կովկաս նոր-
« ընտիր կաթուղիկոսին Ամենայն Հայոց Մատթէոսի, որով մեր տէ-
« րութիւնը փափաքեցաւ պատիւ ընել Վեհափառ Հայրապետին աս-
« տիճանին և Ազգիս Հայոց իսկ այս տարի գնացի հոն՝ մեր երկրէն
« փոխադրուող Զերքէզներուն գործերը կարգի գնելու համար, եւ ոչ
« թէ եկեղեցական ո՞րեւիցէ խնդրոյ վրայ խօսելու մտքով»:

« Ահա այսչափ բան միայն կրնար եւ պարտական էր ըսել ձեր
« թղթակցը իմ Պոլիս երթարուս վրայ: Զեմ ուզեր քննութեան ել-
« նել թէ ինչ աղբեւրներէ կառնու նա ձեղի տւած տեղեկութիւնները,
« արդեօք Տաճկաստանի այլալեզու շուկաներէն թէ հոն տպուող
« օտարազգի լրագիրներէն, որ վաղուց ծանօթ են մեղի իրենց ան-
« ճոռնի սուտերովը եւ մեր կողմերուն վրայ ունեցած կատարեալ
« տգիտութեամբը: Ինչ և իցէ, կը խնդրեմ պարոն՝ որ այս լուրերուն
« ստոյդ միտքը դուրս հանես եւ այս նամակս լրագրոյդ մէջ հրա-
« տարակես: Մնամ... եւ այլն:

Միքայէլ Լոռու – Մելիքեանց»

(1860, Յունիս 14, Մասեաց Ազաւեի, երես 120)

Դարձեալ ի նորին հանդիսի, ընդ վերնագրով Փարիզ լրագրին
տեղեկութիւնները:

« Փարիզ անունով լրագիրը իւր անքաղաքագէտ եւ անզգոյն
« ոճոյն պատճառաւ չկարենալով կանոնաւոր կերպով մտնել Ռու-
« սաստան, անոր քանի մը յօդուածներուն օրինակները ատեն ատեն
« կհասնին մեր ձեռքը, եւ օրէ օր աւելի յայտնի կընեն մեղի անոր
« խեղճ խմբագրութեանը պէս՝ թղթակիցներուն ու խմբագիրներուն
« ալ խղճալի մարդիկ լինելը: Խղճալի կըսեմք՝ նոցա ցուցուցած

« միամտութեանն ու տգիտութեանը համար, իսկ եթէ չարամտութեամբ է դրածնին, ինչպէս որ բաւական տեղի կայ կասկածելու, « ովքաք է ըսեմք նաեւ ատելի եւ զգուշակի...»

« Մենք ուզելով փոքր ինչ պատիւ ընել լրագրին, եւ հերքել առ նոր թղթակցութիւններուն անհիմն ու անպատկառ զրուցուածքը, « որով կանոնեն որ իբր թէ հայազգի զօրավար մը եւ քանի մը ազգագաւ (լրագրին տուած յիշոցքն է) ամիրաներ ու եկեղեցական- « ներ՝ միտք ու ջանք ունեցեր են մօտ տարիներս՝ Հայոց եւ Յուրաց եկեղեցիները միացնելու, կըսեմք թէ այն գիտաւորութիւնը « կամ ջանքը սոսկ եղջերուաքաղ կամ խրտուիլակ մըն է՝ մեր բար- « րեմիտ ժողովուրդները շփոթելու մտքով՝ քանի մը չարամիտներէ « հնարուած, ու Փարիզ անուանեալ լրագրին մէջ միամտութեամբ « կամ չարութեամբ հրատարակուած»:

« Բայց որովհետեւ այս խօսքն ալ կըսէ լրագիրը յանդկնաբար, « - այսինքն «Երկու տողին մեծաբան սնուտեաց բարբառով» հեղինակին ոճովը, թերեւս եւ բերնովը, թէ «Եթէ նորէն տարածեն այդ սուտ խօսքերը թէ բնաւ Յունաց եկեղեցւոյն հետ միաւրաւ « քեան խօսք չէ եղած, այն ժամանակ ինքը Վեհ. Ս. Կաթուղիկոսը ալիսի ստիպի շրջաբերական հանել ու եղելութիւնը մի ըստ « միոնչ պատմել», ահա մեք ստուգիւ գիտնալով որ Վեհափառ Կաթողիկոսին անունը այս բանին մէջ զուր տեղը եւ յանդկնաբար « մէջ բերուած է, - ահա մեք՝ կըսեմք եւ կը կրկնեմք թէ ԲնԱԻ « ՅՈՒՆԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅՑՆ ՀԵՏ ՄԻԱՅԻՈՐՈՒԹԵԱՆ ԽՕՍՔ Զէ ԵՂԱՄ : « Տեսնենք թէ երբ պիտի հրատարակէ անուանեալ Փարիզը այն « շրջաբերականը զոր ինքը կըսէ թէ Վեհափառ Կաթուղիկոսը հանելու պիտի ստիպի (չգիտեմք յումմէչ)»:

« Արգեօք բարեսէր ընթերցողք աւելի իրաւունք չունին յուսաւ « լու որ Սրբազն Կաթուղիկոսը այդպիսի լիրբ եւ խոռվարար լրաց զըլաց զէմ կամենայ հանել վաղ կամ անպան իրեն պատկառեալ « Ա շրջաբերականը» :

« Այսպիսի լրագրաց մէկն է ահա նաև Պօլոսյ Մեղու անուանեալ « անոնց եւ չարաթոյն հանդէսը, որ - ինչպէս այդ օրերը ստուգեամբ - յինք - երդում ըրեր է եղէր որ ազատութեամբ (այսինքն լրաց թեամբ) գիր անցընէ ու հրատարակէ, առանց բնաւ քննելու, ո՛ր- « եւիցէ չարախօսութիւն եւ զրպարտութիւն, մանաւանդ թէ ընդ « զէմ եկեղեցականաց Ազգիս առհասարակ՝ հեռաւորաց եւ մերձաւ « որպաց, կենդանեաց եւ ննջեցելոց» :

(Մասեաց Աղաւնի, Թէոդոսիա, 1861, Մայիս 10, երես 120).
Այսպէս ուրեմն ոչ զաղարէին հակառակորդք անբարեմիտք յար-

ծարծելոյ զլլրպարտութիւնս այսպիսիս համաձայն նպատակաց իւրեանց՝ քմահաճոյից եւ շահուցն յորժամ գտանէին գտոփթու կամ պէտքը ունէին, դոր ոչ մոռանային փորձել մանաւանդ եւ յաւէտ ընդ դէմ Գէորգայ, որպէս փորձեցին անբարեմիտք տոթիւ կաթուղիկոսական ընտրութեան յամսն Տեառն 1844—1866:

Վասն որոյ առիթ պատեհ եղեւ եւ բարուք արար, զի Տ. Գէորգ Ս. Արքեպիսկոպոս երբեմն Պատրիարք բողոք կալաւ առ Տ. Պօղոս Արքեպոս—Պատրիարք եւ եթող զհատուած ինչ պատմական եւ կարեւորագոյն, որպէս տեսցի ի պատճենէ բողոքագոյն զոր ամփոփեմք աստանօք ի տեղեկութիւն ապագայից եւ ի դուդնաքեայ բացատրութիւն երկուց յօդուածոցդ եւ տարածայնութեանց :

«Առ Ամենապատիւ Ս. Պատրիարք, առ Աստուածառէք գերանդամս Խառն ժողովոյ եւ առ Ազգ. Երեսփոխան յարդելիս» :

«Ամենապատիւ Սրբազն Եղբայր ի Քրիստոս : Տ. Պօղոս Արքեպիսկոպոս, Պատրիարք Հայոց Կոստանդնուպոլսու

«Որ ի հոգեւոր ծառայութիւն Ազգին ուխտէ զանձն առաջի «Աստծոյ, նուիրական պարտաւորութիւն է նմին ըստ անստերիւր «Ճմարտութեան եւ ուղղափառ դաւանութեան Հայաստանեայց «Սուրբ Եկեղեցւոյ ծառայել սիրով յօդուտ Ազգին ըստ հոգւոյ եւ «ըստ մարմնոյ, եւ համբերել տանել մանաւանդ հալածանաց եւ նաև «խատանաց՝ որպէս արժանն է ծառայի եւ աշակերտի Քրիստոսի : «Ուստի եւ մեք ջան ի գործ արկեալ յամենայնի ըստ այս կատար «բել զպարտաւորութիւնս մեր զայս զմեծ՝ յիրաւի համբերել համարէաք առանց վրէժիննորութեան եւ ոխակալութեան, որ ինչ նաև «խատինք եւ անուանարկ քարաձգութիւնք զմէնջ լինէին երբեմն «յոմանց, մինչեւ անդամ պատասխանոյ արժանի առնել չախորժեալ «լով՝ ներողամիտ իսկ լինէաք այնպիսեացն» :

«Եւ թէպէտ ի 104 թիւն Մանգումիի ի դէպ եղեւ մեղ ի շարս «եօթն ընտրելի եպիսկոպոսաց ընթեանուլ անպատեհս եւ զմէնջ, «դուցէ առաւելագոյն քան զայլոցն, սակայն ոչ փոյթ արարաք, զի «զբաղեալ դուռվ ի շինութեան դպրոցիս եւ սրբոյ եկեղեցւոյս եւ «այլոց պազային բազմախուռն դործոց Հրկիզեալ ժողովրդեանս «(Պրուսայու)՝ չունէաք երբեք ժամանակ եւ միջոց ունին մատու- «ցանել այնպիսի աղճատարանութեանց : Եւ թէ զի՞նչ ինչ զրեալ «իցէ զմէնջ Ծիլն Աւարայրի՝ չկարացաք իմանալ զայնս առ ի չգոյէ «յիշեալ օրագրին ի քաղաքս» :

«Բայց քանզի անստորագիր քննիչն այն հանգամանաց եպիսկոպոսաց յայտնաղոյնս բացատրեալ է զնոյն բան «Աւարայրի Ծիլն» ի 129 թիւն «Մանգումի», վասն որոյ ի տեսանել մեր զայն

« Եւ յլնթեսնուլ՝ վիրաւորեցաք յոյժ, ոչ առ այլ միտս՝ որպէս թէ
« վրիպեալ գտաք ի յուսոյ եւ այլն, այլ զի եսկիսկոպոսական սուրբ
« կարդն լեալ էր խաղալիկ ի ձեռս այնպիսեաց, որ ազգասիրական
« գիմակաւ յանդգնէին զրաւարտել յանիրաւի զաւաշտօնեայս Տեառն
« մերոյ Յիսուսի Քրիստոսի, որոյ իբրեւ անարժան սպասաւոր փու-
« թացայ յայս նուադ բողոքել առ Սրբազնութիւն ձեր եւ առ արդա-
« բազատ անդամն Խառն Ժողովոյ Զերդ միջոցաւ, որպէս զի որով
« եղանակաւ եթէ արժան իցէ՝ բարեհաճեսջիք քննելով զբանս զըր-
« պարաւոթեանց ի վեր ածել զնշմարտութիւնս»:

« Զնոյն բան բացարութեան զրաւարտչին այնորիկ անշուշտ ըն-
« թերցեալ է եւ ձերդ Սրբազնութիւն, որով ընդհանուր աշխարհի
« յայտ առնէր զմէնջ լինել անհաւատարիմ Սրբոյ Եկեղեցւոյ եւ Աղ-
« ղին, որպէս թէ առ պատրիարքութեամբ մերով միացեալ իցեմք
« ընդ ժէնէրալ Մէլիքովն առնել փոփոխութիւն ինչ ի ճշմարիտ դա-
« ւանութիւնս մեր եւ այլն, եւ այլն, բայց յայս բան՝ զոր անստո-
« բազիր նամակն ի բերանոյ «Ծին Աւարայրի» խօսի՝ սուտ է բո-
« լորովին եւ անիրաւ զրաւարտութիւն: Այդպիսի առաջարկութեանս
« ինդիր ոչ երբեք եղեալ է, այլ այն ի կողմանէ Ազգայնոց առ մեզ
« առ պատրիարքական դիւանն մատուցաւ խորհրդով եւ դիտութեամբ
« հանդուցեալ Ս. Կաթուղիկոսին, զոր եւ մեք առաջի եղաք յայն-
« ժամանակութիւնը Հոգեւոր եւ Գերազոյն Ժողովոց ի քննութիւն, եւ
« ժամ անդամոց Հոգեւոր եւ Գերազոյն առաջարկութեան իբրեւ ներկայա-
« այն իսկ գդկամակութեամբ, մինչեւ առիթ լինելոյ ընդ ակամբ
« հայելոյ ի մեզ Հանդուցելոյն: Խորհուրդ ի մէջ ասեալ կրկին Ժո-
« ղովոյն Յանձնաժողով իմն հաստատեցին, յորում յետ ի սրբագը-
« սուցին Յանձնաժողովի իմն հաստատեցին, յորում յետ ի սրբագը-
« ըութեան ածելոյ զնոյն տետրն առաջարկութեան իբրեւ ներկայա-
« ցուցին մեզ՝ բազում ինչ եւ մեք՝ յապաւեցաք անտի: Ապա յընդու-
« նել եւ ի սոսորագրել լիշեալ կրկին Ժողովոց՝ մեք իսկ սոսորագը-
« ըութիւն ասէ լինել: Զի որ ինչ աղդային ժողովութիւն: Ահա, այս է զորմէ ծածուկ դաշնադը-
« բեցաք ի հաստատութիւն: Բայց եթէ ի թիւր մեկնութիւնս զառա-
« րութիւն ասէ լինել: Զի որ ինչ աղդային ժողովութիւն: Ապա յընդու-
« գրեալ եւ սոսորագրեալ է, զիա՞րդ կարէ ծածուկ դաշնադըութիւն
« կոչել: Ուղեմն սուտ է այս բան, եւ բոլորովին զրաւարտութիւն:
« Նա զի ի տետրն յայն չերեւէին երբեք հետք կամ նշմարանք ան-
« նա զի ի տետրն յայն չերեւէին երբեք հետք կամ նշմարանք ան-
« դամ կրօնավոխութեան: Բայց եթէ ի թիւր մեկնութիւնս զառա-
« ծանիցի ոք՝ չունիմք ինչ ասել առ այն, զի եթէ ոչ թիւր մեկնէին
« եւ բանք Սրբոյ Աւետարանին, չերեւէին երբեք զանազան աղանդա-
« ւորք ի միջի»:

« Ապաքէն վկայեսցեն ստութեան Աւարայրի Ծիլին եւ հետեւ-

« զաց բանի նորա անդամք հոգեւորական եւ Գերազոյն Ժողովոց
« այնը ժամանակի, յորոց եթէ ոմանք կնքեցին զմահկանացու ըն-

« թացս կենաց իւրեանց, այլ բարեբաղզաբար բազումք վայելեն ի « կենդանութեան, զորսց անուանս չէ հարկ դրել մի առ մի, ըստ « որում ներկայացուցէ զայնս արձանագրութիւն պատրիարքական « դիւանին»:

« Եւ յիրաւի ասելով, դարձեալ անվայել համարէաք մեղ, նա- « մանաւանդ զայսու միջոցաւ զրել ձեզ զայսմ ամենայնէ, որպէս զի « մի՛ կարծիս զմէնջ տայցեմք, իբր առ վրիպելոյ յուսոյն մերոյ մը- « տարերեալ ի բողոքս յայս, ոչ ինչ փոյթ է մեղ եւ չկարէ զէթ եւ « դուզնաքեայ յաւ իմն պատճառել, զի ոչ բնաւ թեկն ածեմք զա- « ւագութեանց եւ զիշխանութեանց, այլ վասն յանիրաւի անուա- « նարկութեանս պարտաւորիմք բողոքել: Առ իմէ՞ այդքան զրաբար- « տութիւն զմէնջ, ո՞չ ասլաքէն առ նախանձու եւ չարամտութեան. « ա՞յս իցէ վարձ հաւատարիմ ծառայութեանս մերոյ զոր ծառայե- « ցաք Ս. Եկեղեցւոյ եւ Աղդին իմոյ սիրայնոյ, եւ ընդէ՞ր լիցի « զծառայութիւն մեր համարել մատնութիւն, զհարազատութիւն մեր « զրել անհարազատութիւն, եւ այսպէս նշաւակ առնել զանուն մեր « ընդ ամենայն աշխարհ: Քա՛ւ՝ ասել զանձնէս կատարեալ ըստ ա- « մենայն մասին, զի չէ ի մեղ ոդի հրեշտակաց, այլ յամենայնի « գուն գործեցաք եւ գործեմ ըստ մերովսանն այնպէս գնալ, որպէս « արժանն է հաւատարիմ պաշտօնէի Ս. Եկեղեցւոյ Քրիստոսի, բայց « այս յանհնարինս խոցեալ եւ կարելեր վշտացուցեալ զսիրտ մեր « եւ հոգի՝ տրամեցաք յոյժ յոյժ, զոր չէ գրչիւ նկարագրել ըստ ար- « ժանույն աստանօր»:

« Արդ ոչ կամելով անստորագիր նամակագրողին եւ «Աւարայ- « րի Ծիլ»-ին զրպարտութեանց ի ձեռն այլոց օրագրաց առնել պա- « տասխանի, ահա իբրեւ Եպիսկոպոս Աղդին բողոքեմ սրբազնութեան « ձերում, որ ունեք այսօր զպատիւ Պատրիարքական Խշանութեան « Հայոց հպատակելոց Օսմանեան մեծազօր Տէրութեանս, եւ ընդ « ձեղ՝ Մեծ. անդամոց Երեսի. Ժողովոյն, զի խառն Ժողովով եւ « կամ յատուկ Յանձնաժողովի ի քննութեան առեալ զբանս « յիշեալ զրպարտչացն, չնորհ արասջիք ի վեր հանել զծշմարտու- « թիւն եւ զարդարութիւն: Զի եթէ իրաւացի իցեն բանք Ծիլին եւ « արբանեկաց դորա՝ ես ինքնին ամենայն զովութեամբ զտայց շը- « նորհազարդ ջանից նոցա, զի ջանան հրապարակաւ ծանուցանել « զմնասակարս Սրբոյ Եկեղեցւոյ եւ Աղդին: Ապա թէ ոչ՝ քերեսցի « այս աղոտ ի մէնջ հրապարակաւ եւ պաշտօնական կերպիւ, եւ « յայտնի եղիցի զի նոքին ինքեանք զրպարտիչքն են մատնիչ Աղդին, « խանզարիչչք Սրբոյ Եկեղեցւոյ օրինացն, որ առ սէր անձնական « օգտի իւրեանց ոչխողձեն բնաւ խաղալիկ առնել ի ձեռս իւրեանց « զեկեղեցին եւ զեկեղեցականս, մինչեւ զսուրբ հաւատս անդամ»:

« Ի սէր Տեսան մերոյ Յիսուսի Քրիստոսի դարձեալ ինդքելով
 « ի Զերդ Սրբազնութենէ Եւ ի մեծապատիւ անդամոց կառն Եւ Ե-
 « րեսի. Ժողովոց դատ առնել ընդ մեզ Եւ ընդ զբարտիչս մեր, մը-
 « նամք Սրբոյ Եկեղեցոյ պայծառութեան յաւէտ ջանախնդիր, յա-
 « ռաջադիմութեան Ազդիս հոգեանդ խանդակաթ, Եւ երջանիկ բա-
 « րեմանութեանց Սրբազնութեան Զերոյ ցանկացող Եւ աղօթարար
 « նախկին Պ. Կ. Պոլսոյ»

Գէորգ Արքեպիսկոպոս Պրուսայու»:

‘ 1866 Յուլիս 30, ի Պրուսա.

Հակառակ այսմ ինդքոյ Տ. Գէորգայ Եպսի ոչ կարգեաց Պատ-
 րիարքարան գիննութիւն Եւ ոչ հրատարակեաց զհերքումն պաշտօնա-
 կան, գուցէ ոչ զտեալ ի պատրիարքական դիւնատան զարձանա-
 գրութիւն Եւ զծրագիր առաջարկութեան, որպէս Եւ մեք հետազօ-
 տեցաք բազմօք առ ի առնուլ զպատճէնն, Եւ ոչ զտաք, մանաւանդ
 ընկալաք զպաշտօնական պատասխանիս, զի անհետացեալ են համօ-
 րէն ամենայն արձանագրութիւնք Եւ դիւնական գործք Պատրիար-
 քարանի եղեալքն նախքան զհաստատութիւն Ազդ. Սահմանադրու-
 թեան, թէպէտ կասկածիմք մեք Եւ ընդ պահպանութեանս կարեւոր
 գործոց Եւ արձանագրութեանց՝ թղթոց Եւ որոշմանց Եւ այլոց Եւ
 այլոց ձեռագիր մնացելոց յաւուրս Սահմանադրական վարչութեան,
 Եւ ունեմք զպացոյցս:

Արդ գտեալ ի մէջ թղթոց Հոգելոյոյ Հայրապետի Տ. Գէորգայ
 Դ. զպատճէն առաջարկութեան ըստ կրծատեալ ծրագրի, բաւական
 համարեմք զոր զրեցաք, Եւ յաւելումք աստ զոր դտաք.

Ահաւասիկ:

« Սրբազն Մատթէոս Ա. Կաթուղիկոսի Հրաւերակ եկած Մա-
 « կար Եպս. Եւ Մկրտիչ վարդապետ (Բարամեան) Միաբանի Ս. Էջ-
 « միածնի Եւ Ճենենուալ մայիօր Միքայէլ Լոռու Մելիքեան Հայկա-
 « զուն զօրապետն Կովկասու բանակին ոռւսաց Եւ իւր թիկնապահ
 « Հազարապետ Միքայէլ Միանուարեան, Եւ խորհրդական Ղորչագօֆ
 « ատենապիլոն, որք 1859 Ապրիլ 20ին իրկրված էին ի կողմանէ
 « Աղեքասանդր Բ. Կայսեր, Եւ ի կողմանէ Պարեանսդլաքի (Պարեա-
 « թինսքի) ընդհանուր կուսակալին Կովկասու, յայնժամ Աղդայինքս
 « որ ի կոստանդնուպոլիս միաբանեալ Աղդային Ժողովով խորհեալ
 « պատշաճ համարեցաւ (ն) ինդիր Եւ յայտարարութիւն մի առաքել
 « ի Ս. Սինողն որ ի Մայր Աթոռն Ս. Էջմիածին: Եւ 1859 Մայիս
 « 11ին զրեցաւ ըստ ներքոյ դրեալ օրինակին, Եւ Մայիս 15 յանձնե-
 « ցաւ Լոռու Մելիքեան զօրապետին, որպէս զի անկորուստ մատուս-
 « ցէ Սինողին, Եւ զպատշաճն ըստ իւրումն խոհականութեանն տնօ-

« բինեցէ յօդուտ Սր. Եկեղեցւոյ եւ Աղջին համայն : Ահա օրինակն :

« Խնդիր եւ առաջարկութիւն ի գիմաց Հոգեւորականաց եւ Ժո-

« ղովրդականաց բնակելոցս ի Տաճկաստան առ Սր. Սինօդն Արա-

« րատեան Մայր Աթոռոյ Սր. Էջմիածնի, որպէս զի յարաբերութիւն

« մեր ընդ Սրբոյ Աթոռոյն որ առ ժամանակ մի դադարեալ էր (ի

« 1827է ց1842-6. Վ. Ե. Մ.) սկիզբն առցէ ի շարունակել անընդմէջ

« եւ սիրտանու (՞), որպէս եւ էրն կանխաւ :

« Ա. - Ընտրութիւն Կաթողիկոս Հայրապետի Հայոց, յորժամ պա-

« րապեցէ Աթոռն, լինիցի ըստ Սահմանադրութեանն որ հաստատե-

« ցաւ առ Հայրապետութեամբ Տ. Տ. Յովհաննու Կարբեցւոյ (1834-

« 6. Վ. Ե. Մ.) :

« Բ. - Սրբազն Սինօդն Սր. Էջմիածնի ունիցէ զերկոտասան Ան-

« դամս, որոց վեցն իցէ ի Ռուսաստանէ՝ ներկայացուցանել զուխտ

« Հայ Եկեղեցւոյ Ռուսաստանի : Չորս ի Տաճկաստանէ՝ ներկայա-

« ցուցանել զուխտ Հայ Եկեղեցւոյ եղելոյ ի նմա : Մի՛ ի Պարսկաս-

« տանէ : Եւ միւս եւս ի դադիւծոց Աղղայնոց յարեւմուտս ի Մօլտօ-

« վալաքիա, ի Սուչովա եւ յայլուր, ուր զտանիցին ի լուսաւորչա-

« կրօն Աղղայնոց :

« Գ. - Սրբազն Կաթողիկոսն Սրբոյ Էջմիածնի, առաքեսցէ

« զարժանաւոր Եկեղեցական ոք ի Կոստանդնուպօլիս՝ փոխանորդ

« Արքատեան Մայր Աթոռոյ՝ լինել օգնական Հոգեւորական կա-

« ռավարութեան Աղղայնոց ի Տաճկաստան, եւ Անդամ Հոգե-

« ւոր Ժողովոցն Կոստանդնուպօլսոյ, եւ յօդակապ սիրոյ եւ

« միջնորդ յարաբերութեանց ընդ Կաթողիկոսական Մայր Աթոռն

« Սրբոյ Էջմիածնի, եւ ընդ Պատրիարքական Աթոռն կ. Պօլսոյ : Խոր-

« շեալ ի յուղմանց անհամաձայնութեանց ընդ քաղաքական եւ ընդ

« Եկեղեցական իշխանութիւնս եւ ցորչափ է ի փոխանորդութեան

« Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի ի Կոստանդնուպօլիս, անհնարին

« լինիցի ի նմին պաշտամանէ իւրմէ բարձրանալ ի Պատրիարքութիւն

« Պօլսոյ, բայց եթէ յետ ելիցն ի փոխանորդութենէ եւ երթալ դա-

« դարելոյ իւրոյ ի Մայր Աթոռն զամս երիս, այնուհետեւ մարթ է

« Աղղին ընտրել եւ կարգել զնա Պատրիարք կ. Պօլսոյ :

« Դ. - Իշխան է Սրբազն Կաթողիկոսն գումարել Աղղային

« Ծնդհանուր Ժողով՝ վասն վերանորոգութեանց օրինաց եւ կանո-

« նաց եւ աւանդութեանց սահմանելոց ի նախնի սրբոց հարց եւ

« Ժողովոց :

« Ե. - Գերագոյն իշխան է ի Հայաստանեայց Եկեղեցւոջ՝ ի դատել

« զանհնաղանդս եւ զմոլորեալսն եւ զայնոսիկ՝ որք զանցանեն զօ-

« րինօք, եւ զյամառեալս ի մոլորութեան եւ զոր ոչ անսան օրինա-

« ւոր Եպիսկոպոսի իւրեանց՝ եւ վճռոյ Հոգեւորական Ժողովոյն :